

վէպը գոնեա նշանաւոր բարբառներով ունենալ: Այս կողմից ցարդ գրի առնուածներէից բարեխղճութեամբ և հմտութեամբ է կատարուած Տ. Չթուռունը: Այսպիսով միւս կողմից կը հարստանայ մեր աշխարհարառը նոր բառամթերքով և լեզուն գեղեցիկ, աշխարհարառին յատուկ արտայայտութիւններով: Աշխարհարառ գրող լաւագոյն հեղինակները լեզուի կողմից նոքա են, որոնք գրաբառի հետ միասին լաւ տեղեակ են մի որ և է բարբառի, առաւել ևս լաւ, հարուստ, ճոխ և պատկերաւոր կը լինի լեզուն անշուշտ, եթէ մի քանի կամ բոլոր բարբառներին լաւ ծանօթ լինին մեր հեղինակները: Վերջապէս պէտք է ուշք դարձնել այս վէպի գրական բանաստեղծական արժէքի վերայ, որով ճոխանալով այս վէպը կարող է և այս կողմից մեր գրագէտներին և բանաստեղծներին կըթիչ հանդիսանալ, մինչև որ կը գայ սպասուելիք հայ Հոմերոսը կամ Ֆիրզուսին և թարգման հանդիսանալով հայ ժողովրդի՝ նորամտքի, սրտի և խանդի այս արգասիքի բոլոր փոփոխակներից կը հիւսէ մի ամբողջութիւն, որ նոր լինելով հանդերձ կամփոփէ իւր մէջ ժողովրդի ստեղծագործութիւնը:

Մեր ժողովրդական բանահիւտութեան մէջ կան և այլ բարձր գրական արժանիքներ ունեցող, օրինակելի, ընտիր և հրաշալի ստեղծագործութիւններ: Բաւական է ուշադրութեան առնել Ռոստամ Զալի վէպը, որի նիւթն օտար լինելով հանդերձ հայ ժողովուրդը վերամշակել, հայացրել է իրրև ինքնուրոյն մի ստեղծագործութիւն: Բազմաթիւ հրատարակուած փոփոխակներից առանձնապէս ուշադրութեան արժանի է Գարեգին վարդապետ Յովսէփեանինը ուսումնասիրութեամբ¹:

§ 3. Տեսնենք այս տեսակէտներով մեր երեք փոփոխակները: Բայց նախ ուզում ենք № 17-ի, Տ. Չթուռու Կարկառու բարբառով փոփոխակի տուած նոր անձնանունների մասին խօսել: Այսպիսով կերևի թէ ինչպէս մի նոր անուն լոյս է սփռում նախորդ փոփոխակներում մութ մնացած կէտերի վրայ:

Յայտնի է ընթերցողներին, որ Զոջանց տան վէպի փոփոխակներում նախ և առաջ մեզ հետաքրքրում է պատմականը: Մեր մամուլը մինչև այժմ այդ աշխատութեանց մասին կամ լուռ է մնացել մեզ անհասկանալի պատճառով և կամ լոկ դրուստել է, բայց քիչ քննադատել: Այսպէս Գրիգոր Բալասանեանը խօսելով Բ. Պալաթեանի «Սասմայ փահլուաններ կամ Թըլօր-Դաւիթ և Մհեր և Ա. Արեղեանի «Թլուատ Դաւիթ» հրատարակութեանց մասին ասում է. «Նորերս «Արարատում» կարգացի Ստ. Կանայեանցի մի շատ հետա-

1. Ռոստամ Զալ. ժողովրդական վէպ (Մոկոց բարբառով). Արտատպուած Ազգապրական Հանդիսից. Քիֆլիս 1903: